

«ՂԱՐԱԲԱՂԸ ԱՅՍՕՐՈՒԱՅ ՍՊԱՐՏԱՆ Է»

«Ղարաբաղը այսօր կը յիշեցնէ յունական Սպարտան, որ տեղ հերոսականութեան ոգին, ինքնազոհութիւնը և կարգապահութիւնը ամէն ինչէ վեր կը դնահաստուի», այսպիսի եզրակացութեան հասած է «Ուաշինկէթըն Փոսթ» թերթը, իր սեպտեմբեր 12ի համարով:

Վերլուծելով 7ը միլիոն Ատրպէյնանի դէմ փոքրիկ Ղարաբաղի տարած յաղթանակներու պատճառները, թերթը կը նշէ, որ փաստօրէն այդ հայկական երկրամասի ողջ տղամարդ բնակչութիւնը կը կռուի նակատի վրայ, ի տարբերութիւն բարոյալուծած ատրպէյնանցիներուն, որոնց գէնֆի ուժով կը փորձեն պահել պատերազմի նակատին դիրքերուն վրայ, այդ դիրքերը չլքելու համար:

Ղարաբաղի ամբողջ բնակչութիւնը մոլեռանդօրէն կ'աշխատի յանուն յաղթանակի, կը մեկնաբանէ թերթի թղթակիցը՝ այցելելով հապնեպօրէն սարճաւորուած Ստեփանակերտի հրասայլերու շինարարութեան գործարանը. ուրտեղ նախկին ուսուցիչներն ու վարորդները կը վերանորոգեն ատրպէյնանցիներու գրաւուած Թ.-72 հրասայլերը: Այդ մեքենաներու վրայ դեռ եւս նախկին տէրերէն յուշ մնացած կայ՝ կիսալուսինն ու աստղը:

«Մենք այս դործով նախապէս չէինք զբաղուեր, սակայն պատերազմը պարտապարհ սորվիլ ամէն ինչ, թղթակիցին ըսած է Անտրէյ Մուսայէլեանը և աւելցուցած. Լիթէ հարկ ըլլայ, մենք անգամ ինքնաթիռ վերանորոգել կը սորվինք»:

Նոյն յօդուածին մէջ հարցազրոյց մը կայ Ղարաբաղի արտաքին գործոց նախարար Արկատի Ղուկասեանի հետ: Ան կը յիշեցնէ, որ ամբողջ աշխարհը կը ցաւակցի հայերուն, երբ իրենց դէմ ունեւորուած եւ բռնի տեղահանութիւն կը գործադրուէր, սակայն այդ օրերուն ալ որեւէ երկիր չէր օգնէր Ղարաբաղին: Այժմ, երբ իրենք սկսած են պաշտպանուիլ եւ ստիպել ատրպէյնանցիներուն նահանջել, ամբողջ աշխարհը հայերուն զավթիչ կ'անուանէ: «Ուրիշին հողերը մեզի պէտք չեն, մենք դուրս կը բերենք զօրքերը, Լիթէ մեզի հանգիստ ձգեն», կը յայտարարէ Ղուկասեանը ու կ'եզրափակէ. «Ղարաբաղի խաղաղութեան համար ամուր Լրաշխիքներ պէտք են, ապա թէ ոչ պատերազմը կը շարունակուի»:

«Ուաշինկէթըն Փոսթ»ի թղթակիցն ալ նոյն եզրակացութեան կը յանգի:



ԳԻՍԻ ԴՈՆԵՐՐԸ ԿՐ ԲԱՍԻՒՆ

Գիսի շէնֆին առջեւ, երէկ նստացոյց մը տեղի ունեցաւ այս տարուայ վարժարանային բուհերու ընդունելութեան ֆննութիւններու անյաջողութեան մատնուած դիմորդներու եւ անոնց ծնողներուն կողմէ: Այս անգամ ՀՀ նախագահէն կը պահանջուէր վերադարձնել բուհերէն իրենց խլուած տեղերը: Առայժմ, որեւէ տեղ հարցի լուծում չգտնելով, ցուցարար դիմորդները կը փորձէին ձեռն իշխանութեան տարբեր օղակներու՝ կառավարութեան, Գիսի նախագահի նստավայրի դռները: Առայժմ սակայն, այդ նիգն ալ ապարդիւն անցաւ:



Մանկավարժները Դադրեցուցին Իրենց Գործադուլը

Թատերական հրապարակին վրայ տեղի ունեցաւ հանրապետութեան մանկավարժներու հանրահաւաք: Նախորդին համեմատ, այս հանրահաւաքին կը մասնակցէին սակաւ թիւով մանկավարժներ, որու պատճառաւ, -ինչպէս նշուեցաւ հանրահաւաքի ընթացքին-, դպրոցներու տնօրէններու սպառնալիքը տիրապետող դարձաւ վարժարանային դիմագրաւուող հարցերուն կապակցութեամբ: Նախորդ հանրահաւաքէն յետոյ՝ գործադիր կոմիտէի 4 անդամներ եւ 2 մանկավարժներ ընդունուած էին Գիսի պատգամաւորներ Ռ. Ղազարեանի, Ռ. Պապայեանի եւ Թ. Ալոյեանի կողմէ: Հանդիպման ընթացքին մանկավարժները ներկայացուցած էին հանրահաւաքի որոշումը, գործադուլային կոմիտէի ծրագրերը որոնք կը վերաբերին յառաջիկայ ամիսներու աշխատանքներուն եւ ընթացքներուն: Պատգամաւորները խոստացան մանկավարժներուն հարցը արժարժել խորհրդարանէն ներս: Հաշուի առնելով այն հանգամանքը, որ մանկավարժներու հարցը պիտի բարձրացուի խորհրդարանի այս նստաշրջանին, մանկավարժները որոշեցին դպրոցները բանալ եւ դասաւանդութիւններու ձեռնարկել: Մանկավարժները պահանջեցին կառավարութենէն՝ իրենց դպրոցական այս տարեշրջանի ամսավարները սկսիլ սեպտեմբեր 18էն սկսեալ:

